

ԱՅՍՈՐՎԱ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ԵՎ ՆՐԱ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(առաջապետ փորձի ուսումնասիրում)

Ա. Ե. Ներսիսյան

Հանրակրթության ոլորտում այսօր ընթանում են բովանդակային բարեփոխումներ՝ դպրոցաշխնության զարգացում, կրթական հաստատությունների ուսումնադաստիհարակչական աշխատանքների որակի բարձրացում, մանկավարժական նոր տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառում, նախադպրոցական, հանրակրթական հաստատությունների կադրերի վերապատրաստում, սովորողների կարողությունների աճին համապատասխան կրթական նոր պահանջների առաջադրում, զարգացնող ուսուցման կազմակերպում և այլն:

Հանրակրթության բարեփոխումների հետ կապված՝ ներկայում մեծ փոփոխություններ են իրականացվում նաև նախադպրոցական կրթության համակարգում, որը լինելով կրթության առաջին և բաղկացուցիչ մասը, շատ բանով է կանխորոշում կրթության որակը:

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները պահանջում է ոչ միայն հանրակրթական դպրոցի սովորողի, այլև ավագ նախադպրոցական տարիքի երեխաների՝ դպրոց ընդունվող երեխայի գիտելիքների, կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը, ուստի դաստիհարակը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն, կարևորի սովորելու և սովորելու ժամանակակից մեթոդները, ունենա աշխատանքները ծրագրելու, ուսումնական պարապմունքները արդյունավետ կազմակերպելու մանկավարժական ունակություններ կարողություններ, հմտություններ:

Տեղին է նշել 19-րդ դարի երկրորդ կեսի հայ նախադպրոցական մանկավարժության մեծ երախտավոր Սոֆյա Արդությանի ուսանելի դրույթը այն մասին, որ մանկապարտեզում երեխաների ուսուցման ու դաստիհարակության արդյունավետությունը կախված է նրանից, թե դաստիհարակչությունները որքանով են հաշվի առնում նախադպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ս. Արդությանը միաժամանակ շնչառում է. «Իրենց բարոյական վարքով, մանկավարժական տակտով, ներգործության մեթոդներով պարտիզանությունները պետք է օրինակ ծառայեն մանկապարտեզի սանիկների համար» /2,127/: Հայ մեծ մանկավարժ Դ. Աղայանը, անդրադառնալով նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման ու դաստիհարկության հարցերին, իրավացիորեն մատնանշում է, որ դաստիհարակչությունները պատրասխանատվության խոր զգացումով պետք է մշտական ուշադրություն դարձնի երեխաների ուսումնական գործունեության վրա. «Պարտիզանություն պիտի մայրական սիրով վերաբերվի երեխաներին, պարապմունքների ժամանակ ունենա զվարք տրամադրություն, մանուկների հետ լինի ջերմ, հեղահամբյուր» /1,401/: Հայ մանկավարժության մեծ երախտավորների ուսանելի դրույթները մնում են որպես այսօրվա մանկապարտեզի դաստիհարակի համար կարևոր ուղղույց:

Քննարկվող հիմնահարցը, մեր կարծիքով, գիտամանկավարժական տեսանկյունով լուսաբանված է մանկավարժական աշխատություններում, որոնք աղբյուրագիտական հիմք են ծառայել նաև մեր ուսումնասիրության համար: Սակայն, մեր նորովի ուսումնասիրությունները հնարավորություն է ընձեռնել մեզ փորձել մանկավարժական տեսական վերլուծությունները զուգակցել մանկապարտեզի պրակտիկ փորձի ընդհանրացման հետ և վերլուծաբար ներկայացնել Ստեփանակերտի թիվ 1 մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի ուսանելի փորձը, և հանգամանքը զույց տալ, թե ավագ նախադպրոցական տարիքի /5-6/ երեխաների գործունեությունը /ուսումնական, աշխատանքային, խաղային/ արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ դաստիհարակը մանկավարժական ներգործության ինչ մեթոդներ, հնարներ ու միջոցներ է կիրառում, որոնք նպաստում են երեխաների կրթության արդյունավետ

կազմակերպմանն ու ճանաչողական հետաքրքրությունների, ստեղծագրութական ակտիվության և ինքնուրույնության զարգացմանը: Ավագ նախադպրոցականի գործունեության առաջատար տեսակը, որի ընթացքում կննագործվում է երեխանների զարգացում՝ ուսումն է, որը մանկապարտեզում պլանաշափ և համակարգված բնույթ է ընդունում:

Ուսումնառությունը դպրոց ընդունվող երեխայի առաջատար գործունեությունն է:

Այն արդյունավետ կազմակերպելու համար վերջնը ՀՀ ԿԳ նախարարության համագործակցած ԼՂՀ ԿԳ նախարարության հետ մշակել է կառավարության կողմից արդեն հաստատվել է/ նախադպրոցական կրթության 2008-2015թթ. ուսումնավարության ծրագիր, որտեղ հստակ նշված են 5-6 տարեկանների՝ նախադպրոցական վերջին տարիքային /ավագ նախադպրոցական/ փուլից տարրական դպրոց անցնելու խնդիրները, թե ինչպես պիտի այն կազմակերպվի, որպեսզի հավասար մեկնարկային պայմաններ ստեղծվեն դպրոց մտնող բոլոր երեխանների համար /7,1/: Այդ ուղղությամբ ուսումնասիրելով թիվ 1 պետական մանկապարտեզի լավագույն դաստիրակշուիհններ ժ. Մարզայանի, Է. Անտոնյանի, Ս. Իսրայելյանի և ուրիշների կազմակերպած ուսումնական պարագմոնքների արդյունքները, փորձն ենք բացահայտել ոչ միայն դաստիրակշուի ուսուցանող գործողությունների օպտիմալացումը /լավագույն տարբերակի ընտրումը/, այլև այն արդյունքները, որոնք դրսուրվում են նաև երեխանների ստացած գիտելիքներում, կարողություններում ու հմտություններում, նրանց զարգացման և դաստիրակշուածության մեջ դրական որոշակի առաջևադարձումներում:

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ մանկապարտեզի ավագ նախադպրոցականի ուսումնական պարագմոնքները կազմակերպվում են ծրագրային պահանջներին համապատասխան, դաստիրակները կազմում են ամենօրյա պարագմոնքի կազմակերպման պլան, որի մեջ արտահայտվում են հետևյալ տարրերը. պարագմոնքի անցկացման օրը, ուսումնական հանձնարարությունների կատարման ժամկետը, պարագմոնքի կառուցվածքի բաղադրամասները, իրար հաջորդող փուլերը և այլն:

Այժմ փորձնք պարզաբանել ժ. Մարզայանի, Ս. Իսրայելյանի, Է. Անտոնյանի կազմակերպած ուսումնական պարագմոնքները արդյունքները: Այսպես, պարագմոնքի ժամանակ, նրանք իմանալով երեխանների հնարավորություններն ու ընդունակությունները ուսումնական ամենատարբեր գործողությունների մեջ անհատական մոտենցում են իրազործում ուսումը դժվար յուրացնող երեխանների նկատմամբ: Ամենից առաջ կիրառում են մանկավարժական ներգործության խրախուսման ու համոզման մեթոդները: Խրախուսելով այդ տարիքի երեխաններին, նրանց մեջ առաջ է բնրում լավ աշխատելու բուրք ձգտում, դաստիրակում ինքնավատահություն իր ուժերի նկատմամաբ: Համոզման մեթոդի կիրառման միջոցով դաստիրակները նույնպես երեխաններին համոզում են թե ինչու են խրախուսվում, տրված գնահատականը արդյոք համապատասխանում է կատարած աշխատանքին, լավ արարքին: Պարագմոնքի ժամանակ երեխաններին հաղորդվում են նոր գիտելիքներ, զարգացնում կարողությունները, ըմբռնումները, ձևավորում բառային ցուցումների և ցուցադրման համապատասխան ուսումնական աշխատանք կատարելու ընդունակություն: Ուսուցման արդյունավետությունը ապահովվում է դաստիրակների և երեխանների կողմից դրսուրված ակտիվությամբ:

Մանկավարժները և հոգեբանները ապացուցել են, որ դպրոցական ուսուցման պատրաստ կարելի է համարել այն երեխաններին, ովքեր ոչ միայն անձնագրային տարիքով և ֆիզիկական տվյալներով համապատասխանում են որոշակի չափանիշների, այլև ընդունակ են մտածել, ինքնուրույն գործներ, համագործակցել տարեկիցների հետ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր 6 տարեկան երեխա իրավունք ունի դպրոց ընդունվելու /3, 154/:

Ավագ նախադպրոցականի զարգացման համար անգնահատելի է նաև աշխատանքային գործունեության ճանաչողական դերը: Փորձը ցույց է տվել, որ ավագ նախադպրոցականի աշխատանքի խելացի կազմակերպման դեպքում, ուսուցման հետ նրա միացման հիման վրա, երեխան շատ նոր բան է իմանում ոչ միայն փորձնական ճանապարհով, այլև աշխատանքային գործընթացի զանազան կողմերի տեսական իմաստավորման օգնությամբ: Անշուշտ, այդ տարիքի երեխանների աշխատանքային գործունեությունը մեծ հնարավորություններ է ստեղծում նրանց մտավոր դաստիրակության համար: Այս ուղղությամբ ինչպիսի աշխատանքներ է տարվում թիվ 1 մանկապարտեզում: Տնօրեն Լիդա Սիմոնյանը, մեր հարցազրույցի ժամանակ պարզաբանումներ տվեց երեխանների աշխատանքային գործունեությունը արդյունավետ

կազմակերպնելու վերաբերյալ: Նա նշեց, որ մանկապարտեզում մեծ ուշադրություն են դարձնում ոչ միայն երեխաների ձեռքի աշխատանքի (հուշանվերների, խաղալիքների, զարդերի, անձնության պատրաստում), ինքնասպասարման (ինքնուրույն հանվել, հազնվել, ծաղիկները ջրել, սեղանը հավաքել), բնության մեջ կազմակերպող աշխատանքի (կենդանիների, բույսերի խնամքի կազմակերպում), այլև ուսումնական աշխատանքի արդյունավետ կազմակերպման վրա, քանի որ հիմնականում նպատակ են հետապնդում երեխայի կողմից համակարգված գիտելիքների ձեռք բերմանը, նրանց աշխարհայացքի ձևավորմանը, ճանաչողական հետարքրությունների և մտավոր ընդունակությունների զարգացմանը: Երեխաները աստիճանաբար ընտելանում են մտավոր աշխատանքին, որի տարրերը արմատավորվելով հիմք են դառնում համոզմունքների ձևավորմանը: Մանկապարտեզի տնօրենը միաժամանակ նշեց, որ ավագ նախադպրոցական տարիում ուսուցման ժամանակ տրվում են կոնկրետ գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են և՝ ձեռքի աշխատանքի, և՝ բնության մեջ նրանց աշխատանքը արդյունավետ կազմակերպելիս: Այսպես՝ չափել, գծել, կտրել, սոսնձել և ծեփել սովորեցնելով, սկիզբ են դնում աշխատանքային գործունեությանը: Այս ուղղությամբ մանկապարտեզի դաստիարակները պրակտիկ խորհուրդներ են ստանում ոչ միայն տնօրենից, այլև Հ. Գույյանցի և Ի. Բագիկի «Խ՞ոչ կարելի է պատրաստել բնական նյութերց», Օ. Մոլտոքարովի «Խաղալիք-հուշանվերների պատրաստման խմբակ», Կ. Լուքպովսկայայի և Ի. Զագրիխսովայի «Պատրաստենք ինքներս» և այլ մեթոդական գրքերից:

ՈՒսումնասիրության ընթացքում մենք փորձեցինք հանգամանորեն ծանոթանալ նաև դաստիարակների աշխատանքի վերահսկման իրականցմանը ներկայացվող տնօրենի մշակած պահանջներին, որը յուրաքանչյուր դաստիարակի համար ուղեցույց է ծառայում: Դրանք են.

- մշտական վերահսկողություն ըստ նախապես մշակված ժամանակացույցի
- ուսումնադաստիարակչական բոլոր ուղղությունների ներառում, կողեկտիվի անդամների ընդգրկում
- մանկավարժական աշխատանքի բոլոր ուղղությունների կապի ու փոխազդեցության ապահովում

- վերահսկման իրականացման համալիք ձևերի կիրառում կախված մանկավարժական աշխատանքի նպատակից, բովանդակությունից, դաստիարակների որակավորումից, կողեկտիվի անդամների փոխարքերությունից և այլն:

Այս պահանջները, անշուշտ, իրենց դրական ազդեցությունն են ունենում մանկավարժական կողեկտիվի աշխատանքի ու որակի վրա:

Ավագ նախադպրոցականի ամեն մի գործունեություն բովանդակում է բազմազան կողմեր, որոնք զարգացնող նշանակություն ունեն:

ՈՒսումնասիրության ընթացքում նկատել ենք, որ մանկապարտեզում խելացի կազմակերպված խաղային գործունեության շնորհիվ զարգանում են երեխաների տրամարանությունը, կրահումը, մտքի սրությունը, լսելամտությունը, ինչպես նաև վարժեցնում են նրանց մտավոր կարևոր գործողությունների՝ համեմատության, տարբերակման, ընդհանրության և այլ գործողության ներանակների տիրապետման:

Իզուր չէ, որ ականավոր մանկավարժ Վ.Ա. Սուլյանին խաղը համարել է «երեխայի բոլոր տվյալները զարգացնելու դպրոց» / 5, 202/:

ՈՒսումնասիրությունների ժամանակ նկատել ենք, որ մանկապարտեզում խաղային պարագաները պարապմունքների ժամանակ լայնորեն օգտագործում են խաղային հնարները, դիրակտիվ խաղները որպես ուսուցման ու դաստիարակության միջոց: Դիրակտիվ խաղները մանկապարտեզում կիրառվում են պլանավորված ձևով և այդ պատճառով էլ դրանք դառնում են երեխաների դաստիարակության և ուսուցման կարևոր օլիգոներից մենքը: Եվ քանի որ դիրակտիվ խաղները օգնում են նոր նյութի յուրազմանը և անզած նյութի ամրապնդմանը, ապա դրանք դառնում են մանկապարտեզում տարբեր պարապմունքների մի ձև:

Դիտարկելով մանկապարտեզի դաստիարակչությի Ս. Խարայնյանի կազմակերպած խաղային պարապմունքները, նկատել ենք, որ փորձառու մանկավարժը, որը այս տարի ստացել է տարվա լավագույն դաստիարակի կոչում, դիրակտիվ խաղները («Պատմիք Տիկնիկին», «Պատմիք նկարի մասին», «Գտիք նկարը» և այլն) օգտագործում է միայն այն դեպքում, եթե համոզված է, որ երեխաները լավ են տիրապետել ծրագրային նյութին: Դիրակտիվ խաղների ընտրության ժամանակ նա խաղների բովանդակությունը համապատասխանեցնում է պարապմունքի

խնդիրներին, որպեսզի գործնականորեն կիրառվեն, ստուգվեն և համակարգվեն երեխաների ձեռք բնրած խնդիրները:

Զրուցնլով դաստիարակի հետ նա նշեց, որ դիդակտիկ խաղերի հաջող անցկացման առաջնահերթ և կարևոր պայմանը երեխաների հետաքրքրության ապահովումն է խաղի նկատմամբ: Դրա համար էլ պարապմունքի ժամանակ նոր խաղ կազմակերպելիս ձգտում ենք, որ մասնակցեն խմբի բոլոր երեխաները: Փոքր խմբերով խաղերը կարելի է ծավալել նաև դերերով՝ ստեղծագործական խաղերի ժամանակ: Նա ենթադրում է փորձից նշեց, որ նպաստավոր պայմաններ են ստեղծում, որպեսզի ընդլայնվի երեխաների հետաքրքրությունները դիդակտիկ խաղերի նկատմամբ: Ճշշտ է նկատել տուս մեծ մանկավարժ Կ.Դ. ՈՒշինսկին գրելով՝ «Զգեստը է թույլ տալ, որ մարի երեխայի հետաքրքրությունը, պնտը է պահպանել և ուղղություն տալ, խորացնել այն» /8,78/:

Փորձը ցույց է տվել, որ բացարձակ ինքնուրույնության դեպքում երեխայի ունակությունները թարբեր կմնան և չեն փոխարինվի կարողություններով: Անժխտելի փաստ է, որ երեխաների ուսումնական աշխատանքային, խաղային գործունեության կազմակերպումը շատ բանով կախված է նրանց հետաքրքրությունից, ինչու չեն նաև դաստիարակի մանկավարժորեն ներգործելու մեջողների, հնարների, միջոցների ճշշտ կիրառումից, որոնք ունեն դաստիարկչական մեծ նշանակություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստագրական նյութերի վերլուծությունը մեզ հնարավորություն է տվել համառոտակի ընդհանրացնել Ստեփանակերտի թիվ 1 մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի ուսանելի փորձը:

Գրականություն

1. Աղայան Ղ., Երկնը, հ. 4, 1963:
2. Կարապետյան Ս., Նախադպրոցական դաստիարակությունը ըստ Ս. Արդությանի, «Մանկ.միտք», թիվ 2, Եր., 2001:
3. Հովհաննիսյան Ա., Նախադպրոցական հաստատության կառավարումը, Եր., «Զանգակ» հր., 2008:
4. Մարության Ս., Ա. Դալլարյան, Նախադպրոցական մանկավարժություն, Եր., 2008:
5. Սուլամումինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, «Լույս» հր., Եր., 1977:
6. ՈՒշինսկի Կ.Կ., մանկավարժական ընտիր Երկնը, Եր., 1947:
7. Գիտակրթական թերթ, «Լուսարար», 1-ին նոյ., 2010:
8. «Մանկավարժական միտք», թ.1, 2001:

Резюме

На основе анализа результатов исследования вкратце представлен поучительный опыт педагогического коллектива Степанакертского детского сада №1 по результативной организации деятельности (учебная, трудовая, игровая) детей старшей группы дошкольного возраста.